10

Լրատու Newsletter

ԳԷՈՐԳ ԹԱՀԹԱԵԱՆ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ
K TAHTA ARMENIAN COMMUNITY SUNDAY SCHOOL
Email: info@armenianschool.org.uk
armenianschool@hotmail.co.uk
Website: www.armenianschool.org.uk

Յուլիս 2025
Լրատու թիւ 33

Ողջոյնի Խօսք

Յուլիսի 6-ին գեղեցիկ հանդէսով աւարտեցինք 2024-2025 ուսումնական տարին: Ինչպէս անցած ուսումնական տարիները այս տարի նոյնպէս դպրոցի համար եղել է շատ հետաքրքիր և բազմաբովանդակ: Երրորդ եռամսեակում վարժարանում կատարուեցին հետևեալ աշխատանքները: Աշակերտների «Գիտելիքի մրցոյթ», «Մարզական օր», Ամավերջի հանդէս: Ծնողական յանձնախումբը և հոգաբարձուները կազմակերպեցին տարեկան դաշտահանդէսը: Ապրիլի 26-ին մեր վարժարանի աշակերտները հայրենիքին նուիրուած գեղեցիկ ոտանաւորներով ելոյթ ունեցան Սրբ Եղիշէ եկեղեցում, Հայոց Ցեղասպանութեան 110-րդ տարելիցին նուիրուած յիշատակի երեկոյի ընթացքում, որը կազմակերպել էր Բրիտանահայ Համայնքային խորհուրդը: Վարժարանի այս տարուայ ամավերջի հանդէսը նուիրուած էր Ամենայն Հայոց բանաստեղծ Յովհ. Թումանեանի և Սիլվա Կապուտիկեանի խօսքերով ասած՝ Հայ երաժշտութեան ՁԻԱՐԹՆՈՑ Կոմիտասի 155 ամեակներին: "Նրա կախարդական գրիչը ուր դիպաւ, կատարուեց իսկական արուեստի հրաշքը լինի առակ թե քառեակ, հեքիաթ թէ պատմվածք, հովվերգութիւն թէ վիպերգութիւն", այսպէս է Յովհ Թումանեանին նկարագրել Աւետիք Իսահակեանը: Տաղանդաւոր կոմիտասագետ Պարոյր Սևակը հետևեալ խօսքերով է բնութագրել Մեծն Կոմիտասին. "Դու ամենայն հայոց երգի վեհափառն ես Դու մեր երգի Մեսրոպ Մաշտոց, Գիր ու տառն ես հայոց երգի":

Նրա "Անլռելի զանգակատուն" սքանչելի պոեմը երգ երգոց է՝նուիրուած Կոմիտասի կեանքին: Օգտուելով առիթից Գ Թահթաեան Կիրակնօրեայ Ազգային վարժարանի կողմից խորին շնորհակալութիւն եմ յայտնում դպրոցի բոլոր բարերարներին, հոգաբարձուներին, կրթական և ծնողական յանձնախմբերի անդամներին, վարժարանի բարեկամներին:

Շնորհակալութիւն բոլոր ծնողներին, ովքեր գիտակցելով հայկական ինքնութեան համար՝ հայեցի կրթութեան անհրաժեշտութիւնը, իրենց հանգստի ժամերը զոհաբերում են, որպիսզի իրենց երեխաները անգլիական միջավայրում հայ մեծանան:

Շնորհակալութիւն մեր սիրելի ուսուց չուհիներին, ովքեր իրենց ուժն ու եռանդը չեն խնայում մեր երեխաների հայեցի կրթութեան և դաստիարակութեան համար:

Շնորհակալութիւն նաև «Լրատու 33»-ի պատասխանատու ուսուցչուհիներին՝ տիկնայք՝ Գիւլխանճեան Լենային, Յակոբեան Գայանէին, Սարգսեան Արմինէին, Աթանոսեան Հրանուշին և Թարվերդի Սթելլային: Այստեղ Դուք կը տեղեկանաք վարժարանի 2024 - 2025 ուսումնական տարեշրջանի երրորդ եռամսեակի ծրագրերի և ձեռնարկների մասին: Վստահ եմ, որ յաճոյքով կը կարդաք:

Ցանկանում եմ բոլորիդ ուրախ ամառային արձակուրդներ:

Վերամուտ՝ սեպտեմբերի 7, 2025

Ռ Թաթուլեան
Տնօրինուհի

ԱՆԻ

ՎԱՆ

ԿԱՐՍ

Անի «Կարմիր»

109 կէտ

Վան «Կապոյտ»

152 կէտ

Կարս «Նարնջագոյն»

152 կէտ

Այս տարուայ յաղթող խումբերը Վանն ու Կարսն են գերագոյն թիւով կէտեր հաւաքած ըլլալով:

Հայոց Ցեղասպանության 110-րդ տարելիցը

Ապրիլի 26-ին Բրիտանահայ Համայնքային խորհուրդը կազմակերպել էր Հայոց Ցեղասպանութեան 110-րդ տարելիցին նուիրուած յիշատակի երեկոյ:
Օրուայ բանախօսն էր պրոֆեսոր Արթուր Խաչիկեանը: Երեկոյի ընթացքում հնչեցին Բախի և Կոմիտասի ստեղծագործութիւնները տաղանդաւոր ջութակահար Նիկոլայ Մադոյեանի կատարմամբ: Ելոյթ ունեցան Գ Թահթաեան Կիրակնօրեայ ազգային վարժարանի աշակերտները ներկայացնելով՝ Սիլվա Կապուտիկեանի, Յովհ. Շիրազի, Յովհ. Թումանեանի, Վահագն Դաւթեանի ստեղծագործութիւնները:

On April 26, the British Armenian Community Council organised a commemorative evening dedicated to the 110th anniversary of the Armenian Genocide. The speaker of the day was Professor Arthur Khachikyan. During the evening, works by Bach and Komitas were performed by the talented violinist Nikolay Madoyan. K. Tahtaian Armenian Community Sunday School was represented by a few pupils who performed some of the works of Silva Kaputikyan, Hovh. Shiraz, Hovh. Tumanyan, and Vahagn Davtian.

Գերաշնորհ Սրբազան Հօր Այցելությունը

Մայիսի 11-ին Գերաշնորհ Սրբազան Հայրը այցելեց վարժարան: Նա հանդիպումներ ունեցաւ աշակերտների, ուսուցչուհիների և ծնողների հետ:

On May 11, His Holiness Bishop Hovakim Manukyan visited the school. He met with students, teachers, and parents.

Աշակերտական Գիտելիքներու Մրցոյթ - Students' Quiz

Այս տարվա աշակերտական <<Գիտելիքի մրցույթը>>տեղի ունեցավ Մայիսի 11-ին: Երեխաները բաժանված էին երեք խմբերի՝ կարմիր,կապույտ,նարնջագույն: Ամեն տարի է՛լ ավելի մեծ հետաքրքրություն ու ակտիվություն է
առաջանում մրցույթի մասնակցության մեջ: Այս տարի հատկապես նկատելի էր թե՛ երեխաների պատրաստված լինելը, և թե՛ հետաքրքրությունը դեպի՝ մրցույթը: Երեխաներից ամեն մեկը փորձում էր իր ներկայությամբ և գիտելիքի պաշարով իր խմբին ավել նիշ բերել: Եվ այս ամենի արդյունքում հաղթեց ծիրանագույն՝ Կարս, խումբը:

Անի - 81 Վան - 80 Կարս - 85

Աշակերտական Գիտելիքներու Մրցույթ - Students' Quiz

Անչափ հաճելի էր այդ ամենին հետևել և հպարտանալ մեր երեխաների հաջողություններով: Շնորհակալություն մեր շատ սիրելի տնօրենուհի՝ Ռուզաննա Թաթուլյանին և մեր ուսուցչուհիներին, ովքեր ջանք ու եռանդ չեն խնայում կրթելու մեր աշակերտներին: Դէ, իսկ մեր ծնողական հանձնախումբը, ինչպես միշտ, մեզ բոլորիս զարմացրեց իր համեղ ուտելիքներով և կազմակերպվածությամբ: Շնորհակալություն բոլորին:

On May 11, an interesting competition of students' knowledge took place. All pupils were well prepared and actively participated in answering all questions on the subject of the Armenian Highlands and the history of the Armenian people. Everyone tried hard to score more points for their team and as a result the Orange Team won. It was a pleasure to watch all of this and be proud of our children's successes thanks to the efforts of our beloved headteacher, Ruzanna Tatulyan, and all our teachers. Not forgetting out Parents' Committee for providing the delicious food.

Մարզական Օր – Sports' Day

Ինչպես ամեն տարի, այս տարի նույնպես գեղեցիկ ավանդույթ դարձած, մայիսի 18-ին, կայացավ բոլորիս կողմից շատ սիրված մարզական օրը:

Միջոցառման նպատակը ոչ միայն ֆիզիկական ակտիվության խթանումն էր, այլև՝ համերաշխությունն, ընկերական ոգու ամրապնդումն ու թիմային աշխատանքը:

Օրը սկսվեց ողջ դպրոցի մասնակցությամբ՝ ուրախ ու ոգևորված տրամադրությամբ: Աշակերտները բաժանված էին Կարմիր, Կապույտ, Ծիրանագույն Խմբերի :

Մարզական խաղերը և մրցույթները անցկացվեցին ուսուցիչների հսկողությամբ:

Երեխաները ցուցաբերեցին մեծ ոգեւորություն, ճկունություն ու եռանդ:

Միջոցառման ամեն մի վայրկյանը լի էր ծիծաղով, խանդավառությամբ ու հիշարժան պահերով: Աշակերտները ստացան անմոռանալի հուշեր:

Օրվա գագաթնակետը դարձավ համատեղ հյուրասիրությունը, որտեղ բոլոր մասնակիցները վայելեցին ծնողական հանձնախմբի կողմից սիրով պատրաստված համեղ, բուրավետ ուտեստներն ու քաղցրավենիքները՝ ամփոփելով մարզական օրը ջերմ, ընտանեկան մթնոլորտում:

Մարզական Օր – Sports' Day

Այս գեղեցիկ օրը վկայությունն էր այն բանի, որ Գէորգ Թահիթաեան Ազգային Վարժարանը ոչ միայն ուսումնական հաստատություն է, այլև ամուր, համախմբված ընտանիք, որտեղ յուրաքանչյուր պահ դառնում է կրթության և դաստիարակության մի մասնիկ՝ սեր դեպի հայրենիքը, լեզուն, մշակույթը և առողջ ապրելակերպը: Խմբերի միավորներն էին.

	Կարմիր Անի	Կապույտ Վան	Ծիրանագույն Կարս
Գիտելիքի մրցույթ	81	80	85
Մարզական մրցույթ	23	62	52
Պարանի ձգում	5	10	15
Ընդամենը	109	152	152

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր կազմակերպիչներին, ուսուցիչներին, ծնողական հանձնախմբին և իհարկե՝ մեր շա՛տ սիրելի աշակերտներին այս գեղեցիկ օրը հիշարժան դարձնելու համար:

Our school Sports' Day took place on 18 May. The event created enthusiasm, lots of happy moments for our pupils and their parents.

The event was organised by the teaching staff and volunteers. Our lively children and teenagers competed in running and balancing races and their parents also took part in running races, acting as a role model of good sportsmanship and competition for their sons and daughters.

During lunch the Parents' Committee had prepared their customary popular burgers and grilled chicken sandwiches as well as delicious deserts and watermelon slices.

The winning team of the 2025 Sports' Day was the Blue Team (Van).

Սարզական Օր – Sports' Day

Easyfundraising

Thank you to everyone who is supporting our school for free on #easyfundraising. We have already raised amazing £2,278.67 donations thanks to your continued support! If you have not signed up yet, please join today and you can raise free donations for our school every time you shop online. Over 8000 retailers like eBay, Marks and Spencer, John Lewis & Partners, Etsy, Tesco and Just Eat and etc will donate at no extra cost to you! Please sign up!

Դաշտահանդէս – Summer Fair

Տարեվերջի հանդէսէն առաջ Յունիսի 22-ին վարժարանս կազմակերպեց խորովածի օր մը, վարժարանի բակէն ներս:
Վարժարանիս հոգաբարձուները, Ծնողական յանձնախումբը և ուսուցչական կազմը միմեանց օգնելով, հայկական երաժշտութիւն լսելով, տարբեր խաղերով և իհարկէ համով խորովածը ճաշակելով, գեղեցիկ, ուրախ և անմոռանալի ընտանեկան օր մը ունեցանք:
Բոլորին անխնայ աշխատանքն ու զոհաբերութիւնը մեծապէս գնահատելի է:

Our school's annual BBQ and fun fair took place on June 22nd at the school.
Like every year, all those present participated in this event in high spirits and enjoyed the pleasant atmosphere with live music and delicious food.The children played various games and had fun with each other.
We would like to thank our governors, parents' committee and teachers for making this event so enjoyable. Everyone's efforts are greatly appreciated.

Ամավերջի Հանդէս

2024-25թթ ուսումնական տարին եւս եզրափակվեց տոնական տրամադրությամբ և մշակութային շնչով: Գէորգ Թահթաեան ազգային վարժարանը, պահպանելով իր գեղեցիկ ավանդույթը, տարեվերջը նշեց մշակութային բովանդակալից հանդեսով: Այս տարվա միջոցառումը նվիրված էր հայ մեծ գրող Հովհաննես Թումանյանի և աշխարհահռչակ կոմպոզիտոր Կոմիտասի ծննդյան 155-ամյակներին:

Դպրոցի սաները հանդես եկան յուրահատուկ ծրագրով: Նրանք բեմականացրեցին Թումանյանի հեքիաթներից՝ «Անխելք մարդը» եւ «Սուտասանը», փոխանցելով նրա ստեղծագործության անզուգական ոգին, ինչպես նաև ներկայացրեցին Կոմիտասի ստեղծագործություններից մի քանի երգեր՝ «Կաքավիկը», «Լորիկ ջան» եւ «Քելե - քելեն», ամբողջացնելով մթնոլորտը ազգային ոգով ու մեղեդիով:

Երեխաների արտասանությունները, երգն ու պարը ոչ միայն բարձր մակարդակով էին ներկայացված, այլև հուզիչ և անմիջական՝ հարուստ բովանդակությամբ ու զգացմունքայնությամբ: Թեպետ այս տարի վարժարանն ավարտական դասարան չուներ, դահլիճը լի էր ծնողներով, հյուրերով ու ուսուցչական կազմով: Ջերմ ծափահարությունները վկայում էին հանդիսատեսի հիացմունքի և գնահատանքի մասին:

Տարեվերջյան այս հանդեսը եւս մեկ անգամ վկայեց, որ մեր վարժարանը ոչ միայն կրթական, այլեւ հոգեւոր ու մշակութային արժեքներ կրող ու փոխանցող կրթօջախ է:

Այս տարի նաեւ նշանակալից էր նրանով, որ լրանում էր մեր տնօրինուհու՝ Տիկին Ռուզաննա Թաթուլյանի, ղեկավարման 20 ամյակը:

“Ձեր աշխատանքային 20-ամյակի առթիվ ջերմորեն շնորհավորում ենք և խորին երախտագիտություն ենք հայտնում Ձեր երկարամյա նվիրվածության, պատասխանատվության և առաջնորդության համար:

Այս երկու տասնամյակի ընթացքում Դուք ոչ միայն ղեկավարել եք, այլ նաև եղել եք ներշնչանքի աղբյուր՝ աշակերտների, ուսուցիչների ու ողջ համայնքի համար: Ձեր հետևողական աշխատանքով, հոգատար վերաբերմունքով և առաջադեմ մտածողությամբ Դուք կառուցել եք մի դպրոց, որտեղ կրթությունը ոչ միայն նպատակ է, այլ՝ արժեք: Թող Ձեր կատարած վաստակը շարունակվի պսակվել նոր ձեռքբերումներով, առողջությամբ ու բավարարվածության զգացումով: Ցանկանում ենք Ձեզ անդադար եռանդ, ստեղծագործ մտքեր և հաջողություններ թե՛ մասնագիտական, թե՛ անձնական կյանքում: Շնորհակալություն Ձեր նվիրումի և առաջնորդության համար”:

Դպրոցէն ներս ունինք “Առաջարկներու Տուփ” մը եւ ձեզմէ կը խնդրենք որ ձեր առաջարկները, գաղափարներն ու տեսակէտները դպրոցի աշխատանքներու մասին՝ զետեղէք այդ տուփիկին մէջ:

Ամավերջի Հանդէս – End of Year Performance

On July 6, the 2024-25 academic year ended with a festive mood and cultural spirit. As per tradition, we celebrated the end of the year with a culturally meaningful event. This year's end of year performance was dedicated to the 155th anniversary of the birth of the great Armenian writer Hovhannes Tumanyan and the world-famous composer Komitas. In their honour, the students of the school presented the songs from Komitas' works: "Kakavik", "Lorik jan" and "Kele - kele". The students also performed two of Tumanyan's fairy tales "The Foolish Man" and "The Liar", conveying the incomparable spirit of his work. Each class prepared excellent performances of different kind rich in content and emotion; the students acted, sang, played musical instruments, and danced traditional Armenian dance completing the atmosphere with national spirit and melody.

Although the school did not have a graduating class this year, the hall was full of parents and guests. The warm applause testified to the admiration and appreciation of the audience.

This year was also significant in that it marked the 20th anniversary of Mrs. Ruzanna Tatulyan's becoming the Headteacher of K Tahta Armenian Community Sunday School.

"On the occasion of your 20th anniversary, we warmly congratulate you and express our deep gratitude for your long-standing dedication, responsibility and leadership.

During these two decades, you have not only led, but also been a source of inspiration for students, teachers and the entire community. With your consistent work, caring attitude and progressive thinking, you have built a school where education is not only a goal, but also a value. May your achievements continue to be crowned with success, health and a sense of satisfaction. We wish you continued enthusiasm, creative ideas and success in both your professional and personal lives. Thank you for your dedication and leadership."

Our school is not only an educational institution, but also a spiritual and cultural hub for London's Armenian community.

Armenian Summer Festival

Այս տարւայ «Armenian Summer Festival»-ը տեղի ունեցաւ յունիսի 15-ին: Գ Թաթաեան Կիրակնօրեայ Ազգային վարժարանը մասնակցեց և ներկայացրեց դասագրքեր, որոնք օգտագործ-ւում են մեր վարժարանում դասաւանդման ընթացքում: Բոլոր այցելուները հետաքրքրուած էին ներկայացուած գրքերով: Հատկապէս շատ հետաքրքրուեցին՝ «Սասունցի Դաւիթ» Այբբենա-բանով, որը հարմարեցուած է անգլերէն խօսողների համար, արևելահայերէն և արևմտահայերէն տարբերակներով, և «Հայոց լեզու սկսնակների համար» դասագրքով, որը ստեղծուել է մեր ուսուցիչների կողմից:
Շնորհակալութիւն Սրբազան Հօրը և ASF խմբին այս գեղեցիկ միջոցառումը կազմակերպելու համար.

This year the Armenian Summer Festival took place on 15th June. K Tahta Armenian Community Sunday school had a stall, shared with ACC. We presented the books, that we use for teaching Armenian language at our school, including the Alphabet book “Sasuntsi David” adopted for English speakers, in Eastern and Western dialect, and the text book “Armenian Language for the new learner”, that has been created by our teachers. All visitors expressed interest in the presented books.
Thank you to Srbazan Hayr and his team for organising this amazing event for the community.

School year 2025-2026 starts on 7 September 2025.
For more information about the K. Tahta Armenian Community Sunday School, please visit our Website and Facebook.
To contact us, please email: info@armenianschool.org.uk
Tel: 0044 (0) 785 483 8073

Website:
https://armenianschool.org.uk/

Facebook
KTACSS

2025 - 2026 Տարեշրջան

Առաջին Եռամսեակ 7 Սեպտ. 2025 – 14 Դեկտ. 2025 Term I 7 September 2025 – 14 December 2025	
7 Սեպտեմբեր 7 September	Վերամուտ Back to school
19 Հոկտեմբեր 19 October	Մշակոյթի Օր - Թարգմանչաց Տօն Culture Day
26 Հոկտեմբեր 26 October	Արձակուրդ Half-Term Break
9 November	Open Day
16 Նոյեմբեր 16 November	Ծնողական Ընդհանուր Ժողով Parents' Meeting
14 Դեկտեմբեր 14 December	Նոր Տարուայ Հանդէս New Year's Celebration
Երկրորդ Եռամսեակ 11 Յունուար 2026 – 22 Մարտ 2026 Term II 11 January 2026 – 22 March 2026	
18 January	Open Day
7 Փետրուար 7 February	Ընդհանուր Գիտելիքներու Մրցում Quiz Night
8 Փետրուար 8 February	Վարդանանց Տօն St Vartan's Day
15 Փետրուար 15 February	Արձակուրդ Half-Term Break
15 Մարտ 15 March	Մայրերու Օր Mothers' Day and Open Day
22 Մարտ 22 March	Զատկուայ Հանդէս Easter Celebration
Երրորդ Եռամսեակ 12 Ապրիլ 2026 – 5 Յուլիս 2026 Term III 12 April 2026 – 5 July 2026	
3 May	Open Day
10 Մայիս 10 May	Աշակերտական գիտելիքներու մրցում Quiz for students
17 Մայիս 17 May	Մարզական Օր Sports' Day
24Մայիս 24May	Արձակուրդ Half-Term Break
7 June	Open Day
14 Յունիս 14 June	Դաշտահանդէս School BBQ
5 Յուլիս 5 July	Ամավերջի Հանդէս End of Year Assembly

Խմբագիրներ՝ Տիկ Գայանէ Յակոբեան Տիկ Արմինէ Սարգսեան, Տիկ Հրանուշ Աթանոսեան,
Տիկ Սթելլա Թարվերդի
Խորհրդատու Տիկ Ռուզաննա Թաթուլեան
Անգլերէն եւ Էջադրում՝ Տիկ Լենա Գիւլխանճեան